

Տ. ՀԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԼԷՆՃՅԱՆ

Ծնվել է 1955 թ. Քեսապում (Սիրիա): Ավարտել է տեղի Ուսումնասիրաց միացյալ վարժարանը, ապա միջնակարգ կրթություն ստացել Լիբանանում:

1973-ին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1974 թ. ձեռնադրվել է սարկավագ և մեկ տարի հետո ավարտել ճեմարանը՝ պաշտպանելով դիպլոմային աշխատանք՝ «Պաշտամունքը ըստ Հայ Եկեղեցու կանոնների» թեմայով, արժանանալով «գերազանց» գնահատականի: Այնուհետև մեկ տարի աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում: Ապա, Վեհափառի կարգադրությամբ, մեկնել է Գերմանիա՝ ուսանելու Ռեգենսբուրգի համալսարանում:

1976 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա և իր ուսումնառության չորս տարիների ընթացքում վարել է տեղի հոգևոր հովվության պաշտոնը:

1980 թ. ներկայացրել է վարդապետական թեզ՝ «Մեկնություն Աստվածահայտնության» թեմայով, և արժանացել մասնավոր վարդապետական աստիճանի:

1983 թ. գրել և պաշտպանել է համալսարանի ավարտաճառը՝ «Ծննդոց գրքի հնագույն աղբյուրները» թեմայով:

1985 թ. ներկայացրել է ծայրագույն վարդապետական թեզ՝ «Արարչագործությունը ըստ Յահվեական և քահանայական պատումների» թեմայով, և ստացել ծայրագույն վարդապետի աստիճան:

1984 թ. փետրվարին նշանակվել է Ուրուգվայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, իսկ 1990 թ. հունիսին ընտրվել է թեմի առաջնորդ:

1988 թ. իսպաներեն լեզվով հրատարակել է Հայ Եկեղեցու պատմության և վարդապետության մասին մեկ հատորյակ, ձոնելով Վեհափառ Հայրապետի ծննդյան

80-ամյակին: Հակոբ եպս. Գըլնճյանը բազմաթիվ հոդվածներ ունի «Էջմիածին» ամսագրում հրատարակված:

1989 թվականին պարգևատրվել է Ռուս Եկեղեցու հազարամյակի մեդալով, իսկ Հայաստանի երկրաշարժի աղետյալներին օգնելու կապակցությամբ արժանացել է Հայաստանի Գերագույն խորհրդի հուշամեդալի:

1990 թ. հոկտեմբերի 7-ին, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Վեհափառ Հայրապետի, ստացել է եպիսկոպոսական ձեռնադրություն;